Հավելված 1

Հաստատված է

«Էվոկաբանկ» ԲԲԸ վարչության

2025 թվականի հոկտեմբերի 27 –ի N 50 որոշմամբ

Cashback-ի և զեղչի տրամադրման պայմաններ

1. **Հիմնական հասկացություններ**

Ակցիա - «Էվոկաբանկ» ԲԲԸ- ի կողմից իրականացվող ակցիա,

Բանկ – «Էվոկաբանկ» ԲԲԸ,

Քարտապան – «Էվոկաբանկ» ԲԲԸ-ում UPI վճարային քարտի ֆիզիկական անձ քարտապան,

Վճարային համակարգ – UnionPay International,

Քարտ – Բանկի կողմից թողարկված UPI վճարային համակարգի քարտ,

Cashback (Քեշբեք) – Գումարի որոշակի տոկոսի վերադարձ գնում կատարելուց հետո:

Զեղչ – Քարտի սպասարկման վճարի նվազեցում՝ համեմատած սկզբնական սպասարկմանն վճարի հետ:

Վաճառքի կետ – Զինական սպասարկման կետերը, որտեղ գործարք կատարելիս ձևավորվելու է **Cashback:**

Կանոններ – Ակցիային մասնակցելու պայմաններն ու սահմանափակումները:

Chargeback – Վճարման վերադարձ, երբ հաճախորդը վիճարկում է գործարքը և բանկը հետ է վերադարձնում գումարը:

Refund, reversal – Գումարի վերադարձ հաճախորդին՝ անավարտ կամ չեղարկված գործարքի դեպքում: Refund-ը իրականացվում է վաճառողի կողմից ապրանքը վերադարձնելուց հետո: Reversal-ի դեպքում գործարքը անմիջապես չեղարկվում է և գումարը չի գանձվում:

Հաշվանցված գործարք - հաստատված գործարք, որն արդեն հաշվառված է բանկային կամ վճարային համակարգում:

2. **Ընդհանուր դրույթներ**

- Ակցիան իրականացվում է Էվոկաբանկի բոլոր UPI վճարային քարտերով,
- Ակցիայի շրջանակներում քարտապանները, կատարելով վճարումներ նշված առևտրային կետերում, ստանալու են քեշբեք 20 տոկոս, ներառյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:
- Յուրաքանչյուր քարտին տրամադրվում է առավելագույնը 10.000 ՀՀ դրամ քեշբեք

- Քարտերի սպասարկման վճարը զեղչվում է և կազմում 5.000 ՀՀ դրամ քարտի գործողության ողջ ժամկետի համար,
- Ակցիան գործելու է ս.թ. 01.11.2025-ից մինչև 30.11.2025թթ.:

3. Ակցիայի պայմաններ

- Ակցիայի շրջանակներում քարտապանները Cashback ստանալու համար պետք է վճարումներ կատարեն ստորև նշված առևտրային կետերում
  - Temu
  - Alibaba
  - TaoBao
  - Shein

3.1 Ակցիայի շրջանակներում քարտապանները կարող են ձեռք բերել UPI քարտերը 5.000 ՀՀ դրամ տարեկան սպասարկման վճարով քարտի գործողության ողջ ընթացքում:

- Վճարումը պետք է կատարվի Էվոկաբանկի կողմից թողարկված քարտով:
- Ակցիային մասնակցում են ինչպես գործող, այնպես էլ նոր բացված UPI վճարային քարտերը:
- Կատարված գործարքների մասով իրականացված հետ գանձումների և հետ վերադարձների դեպքում Cashback չի տրամադրվում:
- Քարտապանների կողմից ակցիային մասնակցութունը կատարվում է ավտոմատ՝ առանց լրացուցիչ համաձայնության:
- Փաստացի հաշվարկված Cashback-ը քարտապանին փոխանցվում է ակցիայի ավարտից հետո հաջորդող 10 աշխատանքային օրերի ընթացքում: Քարտապանին փոխանցվող քեշբեքի գումարը ենթակա է հարկման 20% եկամտային հարկի՝ ՀՀ օրենսդրության համաձայն:
- Քեշբեքը հաշվարկվում է քարտապանի կողմից ակցիայի ընթացքում նշված առևտրային կետերում կատարված և հաշվանցված բոլոր գործարքների հանրագումարից:
- Cashback տրամադրվելու է այն վճարային քարտերով կատարված գործարքների մասով, որոնք քեշբեքը տրամադրելու պահին փակված չեն և ունեն գործող կարգավիճակ:
- Քարտի գործողության ավարտի դեպքում, եթե քարտը չի վերաթողարկվում, ապա Cashback չի տրամադրվում:
- Cashback տրամադրվում է հաշվանցված գործարքների դեպքում:
- **Refund, reversal, Chargeback** կատարված գործարքների դեպքում Cashback չի տրամադրվում:

- Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: